

ԲԱԺԱՆՈՐԴԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
սարեկան 12 ժր.
վեցամսեայ 6 »
Արասահմանի
համար սարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Անտրիկայի համար
սարեկան 3 ժր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տող ստու
ջին երեսին համար 40 ս.
խի վերջին երեսին հա-
մար 20 սանթիմ է. երե-
ֆեկ աւելի անգամներու
համար 20 0/0 զեղչ կըր-
շայ:

Վառնայի համար
ձեռքի 10 սանթիմ

ՇԱԲԱՒ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂՆՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՆԻՒՄ ԶՈՐԵՎՇԱԲՈՒ ԵՒ ՇԱԲԱՒ ՕՐԵՐԸ

ՇԱԲԱՒՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՒԻՆԸ ՊԵՏՎ Է ԳՆՆԵՆԿ ՎՃԱՐԸ

Եստեղ եւ որով որիկ
խոսքով իմանալու համար

K. P. Kalémcar
(Autriche) W. 4.
Schwarzensteingasse
Wien

«БЪЛГАРИКА
«БЪЖУМЪ»
Варна

Redaction du journal
«Char oum»
(Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար
ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ

Արասահմանի համար
ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Վառնայի համար
ձեռքի 10 սանթիմ

ԲԱՅԷ Ի ԲԱՅ. ՈՉ ՆՇՈՒԿՆԵՐՈՎ

Բուլղարական մի մեծ հայաշատ
քաղաքից մի բարեկամ հրատա-
րակութեան համար մի նամակ
է ուղարկել, որի միայն բնորոշ
կէտերն ենք հրատարակում:

Ահա այդ կտորները որոնք
ներկայացնում են մեր յեղափո-
խական յորջորջվածների նկա-
րագրի բնորոշիչ գծերը:

«Փամանակէ մը ի վեր հոս ձեզ
վարկաբեկել ձգտող շշուկներ կը
հասնին ականջիս՝ ընկեր. գա.
զափարական, իտէալիստ կոչված
խլէզներու կողմէ.

«Ատով ալ չի բաւականանալով
ձեր հացին պարմը ճարելիք
գործը՝ թերթը խափանելու լիրբ
և սրիկայ մտածումները կունեն-
նան. . . «մենք Վարզօն երեսէ
ձգեցինք ըսելով՝ բրօքականդ
ընելով»:

Նամակը այնքան յուզված ու
մեծ բորբոքումով է պրված, որ
մենք անխորդ համարեցինք ամ-
բողջութեամբ հրատարակել՝ այդ
անազնիւ միջոցների գրմող
մարդկանց, որոնց նամակագիրը
չառ իրաւացիօրէն խլէզներ է
կոչում, հասարակական կանխա-
հաս դարձանդից ազատ պահելու
համար առայժմ:

«Մենք Վարզօն երեսէ ձգե-
ցինք» ! !

Ահա շատ մեծ խօսք, այդ ողոր-
մելի արտածների ստրկական
չըրթունքների վրայ: Խղճուկ
արարածներ. . .

Վարզօն Ե՞րբ պէտք է ունեցել
ձեր ծառայական փայփայանքնե-
րի, ընդհանրապէս որչափ մեծ
նողկանքով միշտ ետ է մղել ձեր
փայփայանքներն ու քծնումները,
որոնք դուք ընդունակ էք չա-
փազանցօրէն շաշուխու ամեն մի
քիչ թէ շատ զիրք ունեցող եւ
զօրաւոր մարդի, ու խոնարհաբար
կլլելու ամեն խոշոր անարգանք-
ներ, մինչև որ մի ուրիշ տեղ
յենարան գտնէք. . .

Չերժօրէն փափագում էք
«Շարժումը խափանել. ի՞նչու:

որովհետեւ նա իր հայ թերթի
ազատ մտածելու և ազատօրէն
դատելու անկախութիւնն է պա-
հում: Ան շշուկներով էք խափա-
նում: Մի ուրիշ թերթի հանցէք,
բաց ճակատով: Թէ՛ նախ շշուկ-
ներով էք ուղում հող պատրաս-
տել: Ա՜մօ թ. . .

Մենք շշուկներով մաքառելու
յատկութիւնից զուրկ ենք. բաց
կերպ կը մաքառենք ձեզ նման
տարրի գէ՛մ որը շշուկով, ամեն
մաքուր բան լորձիւնտելով մեռ-
ցընելու արամադրութիւնները ու-
նի: Դանաւանդ հիմաբր, մեզ ալ
եւս ազատ ենք զգում այն բարո-
յական բռնի կապերից, որով ա-
կամայից ձեզ հետ կապված էինք
միայն երբեմն, մեր հարազատ
նկարագրին հաւատարիմ մնալով
անկախօղ լինելով գիմանալու,
պոստիկում էինք հրատարակու-
նայ մեր շրջանակներում միշտ:

Մաքառելու ձեռնոցը դուք
նետեցիք. մեղքը ձեր վիզը դուք
նետեցիք շշուկով և մենք հրա-
պարակով ենք վերցնում այդ ձեռ-
նոցը: որքան էլ որ նա ազատ
և շարժող ձեռքերից նետված
լինի:

Վայ սուժողին. ես սուժելուց
չեմ վախնում. գործունէութեանս
ամբողջ 15 տարին անձնական
սուժում է:

Ոչ յեղափոխական ուժերից եմ
զրկվելու. որովհետեւ երբեք
ուժերի ետեւից չեմ գնացել,
թէեւ խեղճ հայ ամբողջ երեսա-
կայել է թէ Վարզօն հարիւրնե-
րով ամսական է ընդունել, ոչ
տաք անկիւններից եմ եմ զըրկ
վելու, որովհետեւ երբեք չեմ
ձգտել տաք անկիւններ, ոչ բա-
րեբարներից, որովհետեւ երբեք
չեմ ձգտել բարեբարներ ունե-
նալ:

Այո մաքառենք պարոններ.
ես չեմ խուսափում. յենվեցէք
ուժ վրայ կուզէք: Ի՞նչու ալ
մաքառումից հայրենիքը և ժո-
ղովուրդը օղտվեն:

ՈՒՌՍ ԿԵԱՆՔԵՆ

— 0 —

ԹԱՆԻ ԲԵԹԵՐԱՊՈՒՐԻԻ մասնաւոր
թղթակիցը իր մէկ նամակով կը
պատմէ թէ ինչ տեսակ սուկայի մի-
ջոցներով սոս աստիկանութիւնը խոս-
տովանութիւններ կը կողքէր բան-
տրակուածներէն: Թղթակիցը նկարագ-
րած էր որ ըստ միւս թղթակից-
ները իրենց տեղեկութիւնները կառ-
նէին հին նախարարներէն, պետա-
կան խորհրդի անդամներէն, ծերա-
կուտականներէն, ընդհանուր նա-
հաւագայտէն. ասոնք աւելի նա-
խադաս կը սեղկին որպէս զի իրենց
զրկելիք յօրեւածները աւելի
քօքէթօրէն հագուեցընեն հաստ հաստ
թեւեղներով: Բայց այս ազդեւորնե-
րը միայն պատմութիւններ կընէին.
և եթէ երբեք ճշմարտութիւնը կը
փայտնէին իրենց բերելն՝ անմիջա-
պէս անոր հակառակ բան կըսէին ա-
ռանց րօպէ մը կորսնցնելու: Այս խո-
րունկ համոզումով թղթակիցը ազա-
տամիտ ուստի մը հետ կը անսակցի.
«Վե՛ստափայլ չէր ան և նոյնիսկ ըլ-
լայիք ալ չունէր. պարզ մահկանացու
մըն էր ան. խոր շնչով մը կը խօ-
սէր իր տեսածներուն վրայ:

Սոսակցութիւնը վերջին գէպե-
րուն վրայ կը լինի բնականաբար:
Անոնց պատճառներուն և ծագմանը
վրայ, թէ ինչպէս շարժումը մեծ ծա-
ւալ է ստացեր և տարածուեր է ամ-
սօրողը Ռուսիոյ մէջ, և թէ ինչպէս
մինչև ցարդ տակաւին վերջ չգաւու:
Վերջը իմ խօսակիցս ժպտով մը
յայտնեց թէ իմ գատողութիւններս
միայն ճիշդ էին և աւելցուց.

«Մեր ստիկանութիւնը ոչ ճար-
պիկ է և ոչ ալ գիտուն. անիկայ
գաւազրութեան հոտ է ստած և ստիկ
կողտուի, ամեն տեղ ստանց ու եւ է
պատճառի և ամէն պատճառով: Չեր-
քով ամեն ինչ երբով կը վերջանայ,
մինչ այստեղ գաւազրութեամբ: Եր-
կիրը լեցու է յեղափոխականներով.
Իսկ ստիկանութիւնը ամէն կողմէ
միայն պարագլուխներ կը տեսնէ:
Պէտք է զիտնաք թէ ինչպէս կրցու-
ան գտնել վերջին գաւազրութիւնը:
Պիտի տեսնէք թէ Գէլլովի Հոլմի գի-
տութեանը պէտք չընեցու, և թե-
րեւս չի հաստատք ինձ: Չեր մօտ
չառ ստարտի և բաղադրիւր բանե-
րու կը հաւատան, իսկ գաւազանի
հարուածի չափ հասարակ բաներ կը
անգօսնէք:

«Արասահմանի մէջ ձեզի ըսին
թէ Ռուսիոյ մէջ մարմնային պա-
տիժները վերցուած են եւ թէ
մարդիկ այլեւս չեն մտրակուիր: Ծա-

լը վերջապէս թոյլ տուաւ ասանք:
Բայց իր պաշտօնեաներն ու ժամապ-
մաներն են որ կը փորձեն անոր ա-
մենակարողութիւնը. իրենց ստաջին
հոգն է օրէնքի տակ զննել յոյր բա-
ցառիկ միջոցները, որք կը տեսնեն
տակաւին: Քսան և հինգ տարիէ ի
վեր կապիւնք վիճակի մը մէջ, որ
կը կոչուի փոքրիկ պաշարման վի-
ճակ. բնաւ չեն գիտնար թէ երե-
կօ, եան անկողինը պիտի մանա՞ք թէ
չէ: Երբ չըլլարուն պատճառաւ ա-
ստիկանիս ալ չեն բանտարկուած,
բայց կրնանք բանտարկուել թոյրս
ալ նախորդ ատիտի և ստիկանագետի
չնորձքէ կախում ունինք: Պայտօն-
եաները վարչական միջոցներով կըր-
նան ընել այն ինչ որ օրէնքը կար-
գիլէ: Իրենց կարող ըլլալով գիտով-
ցած են, ինչպէս օրիով կը գիտնուան
եւ անգամ մը որ մտային՝ կը չա-
լանան: Կը սլըք սնունդ հաճոյա-
կատարութիւնը. իրենց լայն ժպտը
ուրախ գէ՛քք. կենդանի տեսքը
բայց չընկնիք անոնց ձեռքը ուստ
ստատանայի մը պէս, այդ նոյն մար-
դիկը, որ սիրելի կը թուին և սուրբ
պատկերներուն առջև կը խաչակրն-
քեն, մէկ ակնթարթի մէջ ձեզի-
ցոյց կուտան իւր ճիպտուններ չեն վե-
րապահուած միայն շնչուն համար:

«Յուզվար Թ ի վերադարձները
տարուեցան քաղաքին գանազան հի-
ւանդանոցները, որոնց մէջ կար ու-
սանդուհի մը, կամ բանք այստեղ
քար սիրտո որ ամբողջին մէջ բրո-
նուեցաւ, և որ քողաքէ մը սուրի
հարուած մը ընդունեցաւ. երկաթը
հասաւ կուրծքը և ծակեց ձախ ձիւր:
Քանի մը օրէն ստիկան մը ներկա-
յացաւ: Իր անդամը, որ տանի գայն
ստիկանատուն վերադարձր պատաս-
խանեց թէ ծանր հիւանդ է ան, չի
կրնար դուրս ելնել: Մարդը քանի
մը օրէն պարձեալ եկաւ, վերադարձը
նոյն պատասխանը տուաւ սնոր-
բայց ան այս անգամ բան մը իսկ
լսել չուզեց. եւ երիտասարդ աղջիկը
որուն կուրծքը տակաւին կապուած
էր ստիկանեցաւ ելնել և հետեւիլ ա-
նոր:

Հիւանդանոցի կառքը 24 ժամէն
յետոյ բերաւ գայն հիւանդանոց,
բայց այն տեսակ վիճակի մը մէջ որ
գայն տեսնողները յուզուեցան մին-
չեւ լալու ատիժով: Ես ուրիշ չէր
կրնար կենալ, գոնն ալ թոյրովին
գացի էր: Սաստիկ նիհարցած էր.
գիտի մը կը կարծուէր, Երբ կը հտն-
ուեցնէին զինքը կը պոստը. ուսերը
մէջքը և ողնշարը ծածկուած էին
կապտապոյն գծերով որք իրար կը

ՎԱՐՊՈ

կտրելին ամէն ուղղութեամբ մտերը
ուսած էին ամեն կողմէ, և մագր
չափ հաստ ձալքեր կը կազմէին Զայն
պառկեցուցին իր անկողին մէջ ուր
նախապէս մածուն լեցուցին: Ժան-
տարմ մը մնաց անոր քով, և չէր
թողուր գոյն գիշեր ցորեկ:

«Հակառակ այս հսկողութեան,
կրցանք գիտնալ այն ինչ որ այդ սար-
սափելի գծերը կը լսէին արդէն չափէն
աւելի: Քամիսարը կը հարցաքննէր
զայն դաւադրութեան և անիշխա-
նակաւնաց ծրագրի մասին: Անոր յե-
ղափոխական բնկերները կը ճանչնա-
յին: Սպառնացան իրեն խօսել և ը-
սել ինչ որ գիտէր, ան բան մը չէր
գիտնալով լսեց: Այն ժամանակ, ա-
ռանց ուշադրութիւնը դարձնելու ա-
նոր վերքերուն, սկսան ճիպտաներով
ծեծել զայն, ուսերուն, մէջքին: Յետոյ
զարձեալ հարցոփորձեցին
զայն, և սրովհետեւ ան բնաւ բան
մը չէր կրնար բնել, վերտօնի ճիպո-
տեցին զայն այս անգամ ողնաշարէն
վարի մասին վրայ: Վերջապէս պա-
մել տուին անոր ինչ որ կուզէին ի-
մանալ:

«Մի կարծէք այս ստոր գզուելի
գործողութիւնը՝ ասով վերջացաւ:
Այնուհետեւ շատ օրեր ճիպտաները
իրենց սոսկալի գործը կտտարեցին
մայրաքաղաքի ոստիկանատուններէն
չափերուն մէջ: Ուրիշ վիրաւորեալ-
ներ, որք կը կասկածուէին թէր յե-
ղափոխական, ծեծուեցան: Ինծի հա-
ւաստեցին թէ մեքենայիտութեան
մեքենայ մը այնպէս անգթօրէն մըր-
րակուած էր որ հոգեվարքի մէջ տուն
տարին: Հիմա դաւադրութիւնը ամ-
բողջովին յայտնուեցաւ: Ոստիկա-
նութիւնը ինչ որ միտքը գրած էր
իմանալու՝ իմացաւ, և նոյնիսկ աւելի
նա նոյնպէս գիտէ թէ ձառոն-
ցիներն ու Անգլիացիները ինչքան
զուտօր են դրկած Ռուսիա, նա նոյն
իսկ չանդիտանար այն զօտրային
ճարպիկութիւնը, որով հայրենիքի
թշնամիները խաբեցին և ապստամբ-
ցուցին իրեզ միամիտ գործաւորները:
Նոյնպէս հանգիստ կը թողնէ՞ միթէ

ճիպտաները, որք բոլոր լեզուները
բացին, բայց ասոր փոխարէն նա
պատուիրեց բծիշկներուն, վիրաբոյժ-
ներուն և հիւանդանոցի բոլոր մարմ-
նին, որ վէրքերու մասին բան մը
չխօսեն: Եւ եթէ խօսէին՝ պիտի ը-
սէին, ճիպտաները կրկին յատու-
թիւն ունին սորվեցնելու խօսել և
լռել: Երիտասարդ աղջիկը որ մըտ-
րակուած էր, չպիտի ստանայ նոյն-
իսկ վկայագիր մը որով կարողանայ
գանգատ յարուցանել: Եւ երբ նա
իր տունը վերադառնայ՝ հարուածնե-
րուն հեռքերը անհետացած պիտի ըլ-
լան իրեն կը մնայ ամօթն ու բա-
րոյական տանջանքը: Ասոնք բաներ
են որ չեն հաստատուիր:»

«Կը լսէի առանց բառ մը արտա-
սանելու, այս մարդուն պատմու-
թիւնը: ձեռքերը կը զողար և աչ-
քերն ալ կը բոցավառէին՝ երբ կը
խօսէր: Երբ տեսաւ թէ բողբոջին
չեմ յաղթուած՝ հանեց իր գրպանէն
խուզի մը և հարեց: «Ոստիկանու-
թիւնը միայն մարդ մտրակել չգիտէ,
նա նոյնիսկ իրողութիւններն անգամ
կը խեղաթիւրէ: Ոստիկանութիւնը
պիտի ուրանայ ճիպտաներու պաշտօնը
և պիտի հաստատէ զայր, և եթէ ես
փորձեմ ըսել թէ նա կը խաբէ՝ չպիտի
աւատար: Ինչ որ հաղորդագրու-
թիւնները յայտարարեցին թէ մեռ-
եալներն թիւը 96ը չաւցելը: Ֆրան-
սայի մէջ պատուաւոր լրագիրներ ալ
ունիք որ այս թիւին վաւերականու-
թիւնը կերպարուածն է: Շատ լաւ, ես
անձամբ պատեցայ 15 հիւանդանոց՝
իմենքէս մէկը փնտռելու պատրո-
ւակաւ, որ անյայտացեր էր: Իր-
ականութեան առջեւ կեցայ համբեցի
զայն: նոյնիսկ տեսայ մէկը որ կա-
պոյտ փողկապ, սեւ զգեստ և մաշած
կօշիկներ ունէր և որուն գլուխը չը-
կար: կորսնցուցած էր հրապարակին
կամ մեծ պողոտային վրայ: Այստեղ
կը տեսնէք միայն իրենց գլուխը կոր-
սնցընող մարդիկ: Ահա ձեզ իղիկ
կտոր մը, որ նշանակած եմ բոլոր
մեռեալները 2195 հատ են, և ինչը-
կատր ունեցէք թէ Ինթերպոլուրի

մէջ 46 հիւանդանոց կայ, իսկ ես 15
հատը միայն այցելեցի»:

«Արի թուղթը և կարգաճի հերեւ-
եալ թիւերը:

Հիւանդանոց Զինուորական մեռեալ

Վալիէ	59
Աղեքսանդրեան	163
Օպախով	197
Բեթորովովով	443
Վիրաբուժական	151
Երրորդութեան	463
Մարիամ Մագդաղ.	479
Մաքսիմիլիանով	139
Ս. Օլկա	454
Սակարանի	68
Քաղաքային	131
Մարիամ	223
Մալո Օխտա	120
Զինամուօ	152

Վշտաբլիթ ցանկին գումարն է 2195

«Երբ ուզեցի վերադարձնել զայն
իմ խօսակցիս, տեսայ, որ ան օգուտ էր
քսպեր իմ երազական վիճակէս,
ինքը զիս ձգեց և հեռացեր էր: Իր
յցեատմի փոխարէն այս թղթի կը-
տորը ձգեց ինձ, զոր կը պահեմ»:

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Երեկ, 5/19 փետրուարի 45 սոր-
ւան եղեւնը շունչեցաւ այն քասորդ
ազդեցութիւնը եւրոպական մամու-
լին վրայ՝ ինչ ունեցած էր անցեալ
տարուան, յունիս 15-28, երկաթէ
կառավարիչ Իւլիէին սպանութեան
տոթիւ:

Բովանդակ եւրոպական մամուլը
բառ մը միայն բացապանչեց այդ
տոթիւ—«արդարութիւն», անժխտե-
լի արդարութիւն... և ցաւակցա-
կան շեշտ մը իսկ շարասայտուեցաւ
մէկուն կողմէն:

Բայց մեծ իշխան Սերգէյին սպա-
նութիւնը անակնկալ մը չէր երբեք:
Յունուար 22ի արիւնալի օրուանէն
վերջ, ինչպէս որ անակնկալ մը պի-

տի չըլլայ միւսներուն միտքայն ան-
խուսափելի բաղդին արժանացումը:

Մենք անցեալ թղթակցութիւնով
մը հաղորդած էինք շատ մը թերթե-
րու հաղորդած լուրերը այս մտաւոր
պատահարի մասին և օրէ օր կր-
պատէինք անոնց իրականացումին:
—Հազարաւոր ինկող դիակներու վը-
րէժը չէր կրնար անլուծելի մնալ եր-
բէք, ու պիտի չը մնայ, քանի ցա-
րական ներկայ ունի մը իրեն նպա-
տակ ընտրած է հսլածանքով ու բո-
նու թիւնով մնչելու կեղեքել ժողո-
վորը: քանի իրեն նշանաբան դը-
րած է ամեն պահանջ, ամէն խրն-
դիրք, ամէն դիմում փոխարինել
բանտով, աքսորով, սրով և այլ
հրէշային գործիքներով...:

Միամիտ հասարակութիւնը յունի
վար 22ին ջանաց խաղաղ և հեզ
խնդրանքներով ներկայանալ—պա-
տասխան ստացաւ սրով և հրացա-
նով: Ուրեմն, հարկ էր ուրիշ մի-
ջոց, ուրիշ եղանակ գիտնալ ու այդ
եղանակը պոստալ...:

Սոսկվայի վերջին տխուր անցքե-
րէն յետոյ, Սէրգէյ արդէն ստացած
էր իր մահազօժին յայտարարութիւնը
յեղափոխական կուսակցութիւններու
կողմանէ: Անշուշտ՝ գաղտնի ուսա-
կաններու, կրտսերու վտմալը ի-
րենց դերին մէջն էին սակայն, վը-
րիժառու հոգիին առջեւ ասոնք ոչ-
ինչ են ու անապեցելի: Եւ ահա, ե-
րեկ կէսօրին, ժամը երկուք ու կէ-
սին ատենները, մինչ իր շքակա-
քով կը վերագտնար Քրէմլինի թան
գարանէն, յանկարծ ժողովոցին զա-
կին վրիժառու զէժըրը դուրս կը ցը-
ցուի ու պոստը կը նետէ կտաքին
տայ: Կտաքը կը փչուրի, մարմինը
փչրանքներու կը վերածուի և միակ
մնացորդները—թելին և սրունքին
քանի մը կտորները—կը ժողովին լա-
թի մը մէջ և կը փութան պալատ:

Միակ զարմանքը, որ կը յայտնէ
եւրոպական մամուլը, այն ալ Սէր-
գէյին սինթիթի բրոզուրօրէն առաջ-
նութիւն գրաւելն էր, այս սեւ ու

Ա. ԱՍՏԻՆԵԱՏՐՈՎ

Վիկտորիա Պիլլով և

(Տօնախմբութիւն)

(Փրագիէի յիշողութիւններ
ից, Ամրան տրիստիկ
բառակալ սարտիկակ հա-
սարակութեան մեծ)

(Թարգմ. ուսերէնից)

(Շար. նախորդ թիւին)

Բայց ամէնքի համար էլ այդպէս
ձախորդ չէ. շատ գիրասանուհիներ
կարողացել են իրենց լաւ գիրքի
մէջ գնել ինքնապաշտպանութեան
խնդրում:

—Այո, նրանք որոնց քառակուս
միշտ այր մարդ է եղել. դուք ճա-
նա՞նում էի՞ք Բլոքիցկա—Վէրէյսկուն.
հին, փորձուած և խելացի գերա-
սանուհի է: Ես նրանից արասա-
նութեան դատեր եմ առել, և ա գե-

րասանուհիներին անկախութեան և
բարեմասնութեան համար լաւ ա-
ռած ունէր, Հէնց որ սկսում էին
նրա մօտ և է խզուել դերասա-
նուհու դատափետել, նա ծանրօրէն
հառաչում և ասում էր. էհ, հոգ-
եակս, ի՞նչ էք դատափետում, մի-
թէ՞ զիբրին է դաւառական դերա-
սանուհու համար բարոյականութիւն
պահպանել: Մեզանում, հոգեակս
գաւառներում այն դերասանու-
հին է բարոյական որը նահանգա-
պետի հետ է ապրում:

—Ինչո՞ւ, ծիծաղելով հարցրի ես:
—Որովհետեւ նահանգապետի հետ
ապրելու միջոցին, այլեւս ոչ ոք չէ
համարձակում դերասանուհուն մօտե-
նալ. սնորհէն էլ թաթերի վը-
րա ման գալիս «տեղեկաբեր» (թեր-
թեր նահանգական) օղակ օղակ է լի-
նում. ընկերներն էլ չեն կարողա-
խոզութիւններ անել: Թաթերն ա-
ռաջին կարգի էլ թնուած է:

Ես ձեզ մի փաստ էլ կը պատմեմ:
Ես գիմնաղբայից մի ընկերուհի ու-
նէի. Լիդիա էր անունը. դերասա-
նուհի դարձաւ. զլիւից բարձր տա-
ղանդ ունէր: Ոչինչ, ծառայում էր,
յաջող էր, բայց բոց սուպրէզ չէր
կարողանում գտնել: Շատ մաքուր
էր, բծախնդիր, թէ հոգով և թէ
մօրմտով քնքուշ ու համեստ: Յաղ-

թահարեց երկու երեք տասնեակ
թատրոնական լրբերի, զանազան
դիրքի և կոշտան, դադարեցին նը-
րան մօտենալ իրենց ազտութիւն-
ներով. նոյնիսկ յարգել սկսեցին.
դուք մեր բեմը ազնուացնում էք, ս-
տում էին. դուք մեր Փիլոնիկն էք,
Բայց խեղճ փեւիկին միշտ մօթ
անկիւններում էին պահում:

—Սիրելիս, ձեք դերը, բայց համ-
բերեցէք պէտք է Զիգոնային տալ.
Լիդիան պահանջեց, գիտէք, նը-
րա հետ է ապրում... պէտք է որ
զուք խաղայիք, բայց նորին պայ-
ծառափայլութիւնը այդ դերում ու
զուք է տեսնել Օրէջօօսկին: Վի-
պիտէք սրա պաշտպանն է:

Այդպէսով խեղճ ընկերուհուս բո-
լորովին նսեմացրին. բայց ես փր-
կեցի: Եւ գիտէք ինչպէ՞ս: Ամուս-
նացրի: Ուսանողները նրան շատ
կին սիրում: Ու չափազանց վրդով
վում էին որ ազգական վիրաւորում
են: Իսկ այդ ուսանողների զխա-
ւորը Սամուելին էր, Մեծն Պիտ.
րոս ուղղակի. պայտերն է կոտրում,
կրակախառնիչներով հանդոյցներ
կապում: Երիտասարդութեան մէջ
անագին ազդեցութիւն ունի: Այդ
բոլորի հետ միասին շատ ազնիւ զգա-
ցութիւնով, Ահա, ես նրան սկսեցի

համոզել. ամուսնացէք Լիդիայի հետ.
նրա պաշտպանը եղէք: Բայց Լիդիան
ինձ չէ սիրում: —Կը սիրէ: Լիդիա-
յին էլ եմ աղաչում. —ամուսնացիր
Սամուելովի հետ. գոնէ քեզ պաշտ-
պան կը հանդիսանայ: —Բայց ես
նրան չեմ սիրում: —Կը սիրես. վեր-
ջապէս համոզեցի: Հայաստանից մի
շաբաթ յետոյ, ձախորդութիւն.
Լիդիայի դերը խուճ էր և տալիս
ուրիշ գերասանուհու, կարգադրիչ
սիրուհուն. Լիդիան սաստիկ լալիս
է: Ես վազում եմ Սամուելովին. —
էյ գու, պարոն տղամարդ, ինչ ես
անում, կնոջդ վիրաւորում են, իսկ
դու տէրը չես: Ես գլխարկը առնե-
լուն պէս թատրոն է թողում. ու
մի ժամից վերադառնում է. Լիդիա
թեր, գոնէ ցոյց չը տալու համար
որ գու այդ դերի ետեւից շատ ես
ընկնում: Այ քեզ Վարիա Ստիւ-
արտի դերը: Ազում էր խաղալ և
խնդրեցին որ քեզ յայնձեմ. իսկ Լի-
դիան երեք տարի շարունակ քեզ
էր գալիս այդ դերը խաղալու հա-
մար և չէր յաջողում: Մենք ապա
մնացինք, ինչպէ՞ս արիք, հարցնում
ենք. —ոչինչ, իմ մկանունքներս այն
քան էլ դուր չէ գալիս նրանց:

Մի ուրիշ անգամ էլ Լիդիային
վշտացրել էր մի դերասանուհի. Ձե-
նա այնպիսի մեծ պաշտպանութիւն

Թին ու մուրին։ Ամերիկահայ գանգուածին թիւը մօտաւորապէս 25—30,000 էր հասնիւ ընթացողները թող ներդրածիս ըլլան եթէ ըսեմ, շատ աննշան թիւ մը միայն կը կազմեն յեղափոխականները։ Արտասահմանի հայութիւնը երբեմն իր ուշադրութիւնը կը դարձնէ դէպի Ամերիկահայը։ հաստատուելով թէ անզոյն վարգապետութիւնը և քաղաքական ազատ հանգամանքները թող տուած են ամբողջ հայ գաղթականութիւնը յեղափոխական ըլլալու։ Ճշմարիտ է որ հանգամանքները կը ներեն, սակայն հայ ժողովուրդը օգտուելու այդ բարեպատեհ տարիքէ շատ հետո է։ ու եթէ իսկապէս Արտասահմանի հայերը հաւատարմ են Ամերիկահայ գանգուածը յեղափոխական է, շարաշար սխալած են։

Ամերիկայի մէջ ինչպէս ըսինք կայահազին գանգուած մը որուն «Չէզոք» անունը կուտան։ Եւ սակայն այդ չէզոքներն ալ, երկու դասակարգի կը բաժնուին, 1) անտարբեր, 2) շահասէր։

Անտարբերներու ընթացքը բառին բուն նշանակութեամբ դատապարտելի է, անոնք բնաւ չեն հետաքրքրուիր հայով ու հայաստանով, և ոչ ալ կուզեն լսել մահուան բոթաբեր կուժը բաղմանաշար նահատակ հայ ժողովրդին։ Գաւառական մէկ առաւել շատ ճշմարիտ է «քէօն օձը պոչը կը խոթէ ականջը որպէս զի ձայներ չլսէ» ճիշդ այս առածին կը համապատասխանէ անտարբերներու ընթացքը։ Հայաստանի մէջ կատարուած խրժողովները և գաղանթութիւնները որոնք ամբողջ աշխարհի սիրտը կը թնթացնեն, բայց մեր անտարբերներու հոգսը անգամ չէ. տիրոջ սական ազատ հանգամանքները տարբեր ներշնչում ազգեր է անոնց քարացած սրտերուն վրայ։ անօրեայ դէպքերը շատ են բայց չեմ ուզեր ամենը մատնանիչ ընել «ճարժում» ընթացողներուն, մէկ խօսքով անոնք ալ աւելի օտարանալու միտում ունին քան թէ հայ, և շատեր իրենց վրայ հայ անուն կրելն ո՞՞մօթ կը համարեն։ օտարուհիներու համար իրենց բոլոր աշխատանքը չեն խնայեր, սակայն Հայաստանի մէջ կուտուած, դաշունուած, ու բռնաբարուած հայու մը համար կը զժկամակին, եւ եթէ տան ալ, հարիւր տեսակ նախատինքներ ու լուտանքներ կը թափեն։

2) Շահասէրները նոյնպէս զընահատելի են իրենց կատարած գործին մէջ, Ամերիկացի ժողովուրդը իր մէկ առածը ունի որ շատ լաւ կը համապատասխանէ

մեր շահասէր գասակարգին. եթէ մէկը գիտէ Ամերիկացի անհատի մը ու է խնդրոյ մը առթիւ, այդ անհատը թէեւ կարող է իրեն դիմողին խնդիրքը կատարել բայց թէ չուզեր կատարելու հետեւեալ շատասխանը կուտայ «այ էմ սորիւ պըթ ալ քէն նաթ հէլի» կը բաւիմ բայց չեմ կարող օգնել։ Ահաւասիկ այսպէս են մեր շահասէրները անոնք կը լսեն ու կը տեսնան տառապանքը հայրենիքի մէջ, կը տեսնան արիւնք որ գետերու նման կը հոսէ, կը տեսնեն նաեւ որ հազարաւորներ մերկ ու անօթի ձը՞նան խստաշունչ եղանակին զոհ կերթան, այո այդ ամէնը կը կը տեսնեն բայց երբ կը գիտնան և կարեկցութիւն կը խնդրես այդ հարստահարուած ու բռնաբարուած թշուառ ժողովուրդին։ շահասէրը առանց ամօթի կարմիր նշան մը ցոյց տալու, քեզի կը պատասխանէ ամերիկեան ձեւը «կը ցաւիմ բայց չեմ կարող օգնել» և միթէ կարող չէ օգնել, միթէ կարող չէ պըտըլիկի մը ձեւքը շոք հաց տալու. որպէս զի զայն կը ծեծելով գէթ սովամահ չըլլայ, այո՛, նա կարող է ամեն բան ընելու. բայց չուզեր ընել. որովհետեւ իր շահը աւելի գերադաս կը համարէ քան փոքրիկ մանուկ մը, զի միջուառ կին մը մահուանէ ազատելու։

Մեզի համար այնքան ցաւալի չի պիտի գար յարգելի ընթացող և ոչ ալ քեզի, եթէ միայն օտարներու հետ ալ նոյն վարմունքը ունենային ինչպէս որ կը վարուին հայ ժողովուրդին հետ։ Նմոյշ մը բաւական է Շարժումի ընթացողներուն գաղափար մը կազմել տալու այդ գասակարգին Միսս Սիօն Ամերիկացի միսիօնարուհին երբ Պալքանի մէջ աւազակներէ լեռ տարուեցաւ երկու տարի առաջ, ամերիկացիներ սկսեցին հանգանակութիւններ կատարելու պահանջուած փրկանքին գինը որ 60,000 տլրէր, վճարելու, այդ հանգանակութեան մէջ հայն էր որ փայլեցաւ 500 տոլար զրկեց չունեցող ամերիկացիներուն առոր համար ժամանակին գրուեցաւ «Հայրենիք» մէջ, եթէ ընթացողներ կան անշուշտ կը յիշեն։ Սաւալի երեւոյթներ յարգելի ընթացող որ նոյն շահասէրները օտարներու համար չեն խնայեր ամեն ինչ, իբր բայց երբ խնդիր իր ազգին իր հայրենիքին փըրկութեան համար է կը պատասխանեն «կը ցաւիմ բայց չեմ կարող օգնել»ը, ՎԱՀԻԺ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսոնուգի երկրագործական զպրոցի աշակերտները ըմբոս-

տանալով ամբողջը միասին դպրոցը ձգեցրելու են։ Պատճառը ուսուցիչներէն դժգոհ ըլլալն է։ Երկրագործական նախարարութեան բարձրագոյն պաշտօնեաներէն մին գացեր է այդ գործը քննելու։

— Կառավարութիւնը բութայի տաս վակոն պատուիրեր է։

— Կրթական նախարարը բոլոր ուսուցիչներուն պատուիրեր է ամէն գպրոցներուն մէջ փոքրիկ մուզէումներ հիմնեն հաւաքելու համար պատմական հնութիւններ, զանազան ճիւղերու վերաբերեալ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Փետրվար 9ին Բ. Դուռը Սօփիայի գոմիսէրէն պահանջեր է որ տեղեկագիր տայ հոն կազմուած հայ յեղափոխական ժողովի մասին և հասկնայ թէ այդ ժողովին մէջ ի՞նչ որոշումներ տրուած են։

— Վերջին թիւ «Իր» Արմն. նիտոն Հայաստանի զանազան գաւառներու կացութիւնը սարսափելի գոյներով կը նկարագրէ։

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՄԱԿԵՒՈՒՆԻԱ

Կօնտօնի թերթերը փետրվար 10ին կիսապաշտօնական նօթա մը հրատարակեցին, որով կիսացուի թէ Լօրտ Լանստօան Մակեդոնիոյ կացութիւնը բարու. քելու համար ծրագիր մը մշակած է. որու առթիւ խորհրդակցած է և ուրիշ պետութեանց հետ։ Կը պնդեն որ ըստ այդ ծրագրի Մակեդոնիան կառավարելու համար, երոպական յանձնաժողով մը պիտի կազմուի, ու թուրքի» կողմէն ալ ընդհանուր նահանգապետ մը պիտի որոշուի։

ՌՈՒՍԻԱ

Փետրվար 10ին Մոսկուայէն կը հեռագրեն թէ տեղի ունեցեր է մեծ հանդէսով իշխան Սէլկէյի թաղումը, որին ներկայ գտնուեր են բոլոր մեծ իշխանները բացի Վլատիմիրէն որ հիւանդ է։

— Մեծ շքով թաղուեր է նաև մեծ իշխանին հետ սպաննուած իր կառապանը։

— «Իր» Բարիպիէնի թըղթակիցը կը պատմէ որ մեծ իշխան Սէրկիին սպաննողին խընդրանօք, իշխանի այրին զինքը այցելած է բանտին մէջ, Տեսակցութիւնը շատ տխուր եղած է. իշխանուհին բանտէն հեռացեր է զայն ներելով։ Նոյն թղթակիցը կը պատմէ որ Շթօսէլ Թէոգոսիայէն շիտակ Պեթերսպուրկ մեկնեց է,

զինուորական տտեանին ներկայանալու որմէ պիտի դատուի և արդարանայ, ու վերջը պիտի ներկայանաց ցարին։

— «Մաթէն»ը փետր. 10ին կը հազորդէ որ Բեթերսպուրկ եւ գաւառները գործադուլական շարժումները կը զարձակուին։

— Լեհաստանի մէջ 5000 մասնաւոր գպրոցներ որոշած են գոցել։ Կը վախնան թէ վարչապալի մէջ երկաթուղիի ծառայողներու ընդհանուր գործադուլ ըլլայ։

— Բեթերսպուրկէն կը հազորդեն որ Զեմսկի ժողովին գումարման հաւանութիւնը արգէն ցարը տուեր է և պիտի յայտարարուի փետր. 19 ճորտերու ապստամբան տարեդարձին։

— Մեծ դուրսին սպաննողը յայտարարած է որ ցարը մեծ դուքսերուն զոհն է։

— Կրիւպէրկ պիտի վերագաւնայ Մանչուրիա, ցարը ցուրտ ընդունելութիւն ըրեր է Կրիւպէրկի և յայտարարեր է որ ինք Գուրօբաթիկին հետ համաձայնէ. զինուորական շրջանակը խստօրէն կը քննադատէ Կրիւպէրկը որ տիտիպիւնի հակառակ վարուեր է։

— Բեթերսպուրկէն կը հեռագրեն որ ժէնեւը թրեպով պիտի հեռանայ իր պաշտօնէն և ընտանիքը արգէն Մօսկուա զրկած է, և ինք ալ հեռացած ձմեռնային պալատէն։

ՅԱԿՈՐ Կ. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
(Սարապ) ՎԱՌՆԱ
Զանազան ընկերութեանց արժեւթղթեր կը գնէ։
8—12

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ռուսոնուգի ձխալաճառ Բամաճեանի քով կը ձախուին Եւրոպ. Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի Գարտէզներ. Օտար քաղաքներէն ստանալու համար 1.20 սանգիմ պէտք է զրկել։

Ա Ձ Դ
Աղքատախնամ ընկերութիւնս հրապարակ հանած է հորսանեանական և անուան տօնախմբութեան առթիւ շնոր հաւորական քարդեր ի նպաստ քաղաքիս հայ կարօտելոց, եւ կը խնդրէ որ Պատ. Ազգայինը հաճին գրել անոնցմէ փոխան հեռագրի որոնք կը ձախուին ի հաշիւ ընկերութեանս «Հայկական» և «Բարկէն-Սիւնի» ընթացարանը։ — Գին 50 սանգիմ։
Ատենապարտ Ատենապարտ
Յ. ԱԶԱՊԱՐ Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
(Կնիք)

ОТГОВОРНИКЪ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взвимость“ Варна